



ՀՐԱԺԵՇՏ ՍՏԵՓԱՆ ԳԻՇՅԱՆԻՆ

22.03.2014



Հայաստանի բանկերի միությունը և անձամբ կազմակերպության նախագահ Սամվել Ճզմաչյանը խորը ցավով տեղեկացան վաղեմի կոլեգա և ընկեր, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն Ստեփան Գիշյանի անժամանակ մահվան մասին:

Ստեփան Զավենի Գիշյանը ծնվել է 1964թ. մայիսի 5-ին ք. Երևանում (կեղաբյա հոբելյանին նրան չբավականացրեց մեկ ամսից քիչ ավել): 1986թ. ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը և 1996թ-ից մինչ վերջին օրն աշխատել բանկային ոլորտում: Գրեթե երկու տասնամյակ Ստեփան Գիշյանը գլխավորում էր մի բանկ, որը, ինչքան

էլ բարձր չինչի, դարձել է անկախ Հայաստանի վերածննդի խոսուն խորհրդանիշը: Մասնավորապես, «ԱԿԲԱ բանկը» (մինչև վերակազմակերպումը՝ «Հայգյուղփոխբանկ»), ինչպես նրան կարճ անվանում էին մարդիկ, մեր երկրում առաջինն ուշադրություն դարձրեց գյուղացիների և ֆերմերների կարիքներին, սկսելով ֆինանսավորել Հայաստանի տնտեսության համար չափազանց կարևոր այդ ճյուղը: Բանկն այսօր էլ շարունակում է մնալ գյուղացի աշխատավորի գլխավոր գործընկերը, օգնականն ու խորհրդատուն:

Բանկային աշխատանքի հետ մեկտեղ Ստեփան Գիշյանը տարբեր տարիներին գլխավորել է այնպիսի կարևոր, իսկ շատ դեպքերում Հայաստանի համար և նորարարական կառույցներ, ինչպիսիք են «ԱԳԲԱ-Լիզինգը», «Այանս Ֆրանսեզ Հայաստանը», «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթը»: 2006-2007թթ. նա նաև ղեկավարել է Հայաստանի բանկերի միությունը: Հայաստանի նախագահը շնորհել է նրան «Անանիա Շիրակացի» մեդալ, իսկ Ֆրանսիայի նախագահը՝ «Վաստակի համար» ազգային շքանշան:

Իր գործի մասնագետ, ով ոտքի կանգնեցրեց այսօրվա դրությամբ երկրի լավագույն բանկերից մեկը և ընդհանուր առմամբ շատ բան արեց ի նպաստ Հայաստանի տնտեսության, Ստեփան Գիշյանը միշտ մնում էր համեստ և բարեհոգի: Ժամանակ առ ժամանակ ուղղակի զարմանում ես ճակատագրի անարդարության վրա, որը մեր շարքերից խլում է լավագույններին՝ ծաղկուն տարիքում, լի տարբեր ծրագրերով և հույսերով:

Այս կյանքում Ստեփան Գիշյանը շատ բան չհասցրեց իրագործել, բայց և շատ բան հասցրեց, իսկ «նրա բաժակը միշտ կմնա կիսով չափ լցված, ոչ թե կիսով չափ դատարկ»: Նա ընդմիշտ կմնա մեր հիշողություններում որպես մեծ սրտի տեր մարդ, հարգելի գործընկեր և հուսալի ընկեր՝ համեստ, սկզբունքային, հետևողական և միշտ օգնության պատրաստ:

Հայաստանի բանկերի միությունն իր խորը և անկեղծ ցավակցություններն է հայտնում Ստեփան Գիշյանի ընտանիքին, հարազատներին, բարեկամներին և գործընկերներին՝ բոլորին, ում բախտ է վիճակվել ճանաչել նրան: Սա իրականում մեծ կորուստ է բոլորիս համար:

Հայաստանի բանկերի միություն

## ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

28.03.2014

Վշտակից հարազատներ ու բարեկամներ, անպատեհ ու դաժան, կարելի է ասել այս դեպքում անաստված մահվան արդյունքում, մարտի 22-ին հիսուն տարին դեռ չբոլորած իր մահկանացուն կնքեց նորանկախ Հայաստանի բանկային ու ֆինանսական համակարգի ամենավառ ներկայացուցիչներից մեկը հանդիսացող, մեծատառով Մարդ ու Քաղաքացի Ստեփան Գիշյանը:

Ստեփան Գիշյանը ծնվել է 1964թ. մայիսի 5-ին Նոյեմբերյան աշխարհից Երևանում հիմնված աշխատասեր, հայկական ավանդական, բազմամդամ ու ազնվագույն ընտանիքում: Կարծես թե, հենց այս հանգամանքով առաջին հերթին պետք է ընկալել հետագա ողջ կյանքում նրա բնավորության ու գործելակերպին մշտապես հատուկ ընդգծված մարդասիրությունն ու առաքինությունը, ցանկացած իրադրության

պայմաններում բարոյական ամենաբարձր արժեքներով առաջնորդվելու անվերապահ վարվելակերպը:

1985թ. գերազանցությամբ ավարտելով Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը և բանակում հայրենիքի նկատմամբ իր պարտքը կատարելուց հետո 1987-1995թթ. ժամանակահատվածում Ստեփանը աշխատել և տարբեր պաշտոններ է զբաղեցրել Հայաստանի ֆինանսների նախարարությունում, հարկային պետական տեսչությունում, «Հայէկոնոմբանկում»:

1995թ. Ստեփան Գիշյանը իր մի քանի ընկերների և համախոհների հետ միասին Եվրոմիության «Տասիս» ծրագրի շրջանակներում բառացիորեն զրոյից ձեռնամուխ է լինում Հայաստանի գյուղացիական փոխօգնության բանկի (Հայգյուղփոխբանկ) հիմնադրման աշխատանքներին՝ բանկ, որը պետք է ֆինանսավորեր երկրի գյուղատնտեսության բնագավառում իրականացված սեփականաշնորհման արդյունքում ստեղծված շուրջ 300,000 ֆերմերային տնտեսությունների ֆինանսավորման դժվարագույն ու բարձր ռիսկային բնագավառը:

Շնորհիվ իր կամային բարձր հատկանիշների, նպատակասլաց ու հետևողական աշխատանքի, գործին անմնացորդ նվիրվածության, ցավոք այսօր պետք է ասել, շատ հաճախ նաև իր առողջության ու անձնական կյանքի հաշվին և մեր բարեկամ Ֆրանսիական գյուղատնտեսական բանկի խորհրդատուների անվերապահ աջակցությամբ, Ստեփան Գիշյանին հաջողվեց տառացիորեն մի քանի տարում ոչ միայն լիովին իրականացնել բիզնես պլանով նախատեսված բանկի ստեղծման դժվարագույն ծրագիրը, այլև արձանագրել այնպիսի արդյունքներ, որոնք այն ժամանակ ինչ-որ տեղ անհավատալի ու ֆանտաստիկայի ոլորտին կարող էին վերագրվել: Եվ որպես այդ աշխատանքի արժանի գնահատական 2001թ. Ստեփան Գիշյանը ՀՀ Կառավարության կողմից պարգևատրվեց «Անանիա Շիրակացի» մեդալով:

Շարունակելով իր բեղմնավոր գործունեությունը ֆինանսական ոլորտի այլ բնագավառներում, և գյուղատնտեսության մեքենա-տրակտորային պարկի թարմացման արդյունքում արդյունավետ գյուղատնտեսության կայացման

նպատակով՝ 2003թ. Ստեփան Գիշյանը միջազգային հեղինակավոր մի քանի ֆինանսական կազմակերպությունների հետ միասին առաջինը Հայաստանում հիմնեց լիզինգային ընկերությունը՝ «ԱԳԲԱ-ԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպությունը, և առ այսօր հանդիսանում էր այդ կազմակերպության խորհրդի նախագահն ու Գլխավոր տնօրենը:

Անուրանալի է Ստեփան Գիշյանի դերը մեր օրերում հաֆթրանսիական ավանդական բարեկամությունն էլ ավելի բարելավելու ու ամրապնդելու ուղղությամբ:

«ԱԿԲԱ Բանկի» և մեր ֆրանսիացի գործընկերների հետ շուրջ 10 տարվա արդյունավետ ու փոխշահավետ աշխատանքի արդյունքում աշխարհի խոշորագույն բանկային խմբերից ֆրանսիական հանրահայտ «Կրեդիտ Ագրիկոլ» խումբը որպես մեր բանկի գործունեության լավագույն ու դրական գնահատական ցանկություն հայտնեց և 2006թ. դարձավ «ԱԿԲԱ» բանկի խոշորագույն բաժնետերերից մեկը, ինչի արդյունքում բանկը վերակազմավորվեց «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ» Բանկ ՓԲԸ, և Ստեփան Գիշյանը 2006թ. առ այսօր հանդիսանում էր բանկի Գլխավոր գործադիր տնօրենը:

Այսօր «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ» Բանկը Ստեփան Գիշյանի հմուտ ղեկավարման արդյունքում հանդիսանում է Հայաստանի լավագույն ու առաջատար բանկերից մեկը, բազմիցս արժանացել է ֆինանսական աշխարհի ամենահեղինակավոր «Ֆայնենշլ Թայմս» հանդեսի կողմից տրված «Հայաստանի տարվա բանկ» մրցանակին:

Ուստի միանգամայն օրինաչափ էր այն հանգամանքը, որ 2008թ. Ֆրանսիայի կառավարությունը Ստեփան Գիշյանին պարգևատրեց «Վաստակի համար» ազգային շքանշանով:

Իր մշտապես պրպտուն, ձեռք բերվածով չբավարարվելու բնավորությամբ, ֆինանսական նոր մոտեցումներ ու առարկաներ ներդնելու նպատակով 2013թ. Գիշյանը ձեռնամուխ եղավ և շատ կարճ ժամանակամիջոցում կյանքի կոչեց «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ներդրումային և կենսաթոշակային ֆոնդի

ստեղծման աշխատանքները, և հիմնադրման պահից հանդիսանում էր այդ ֆոնդի կառավարիչ, տնօրենների խորհրդի նախագահը:

Հայաստանի ողջ բանկային համակարգում նրա նկատմամբ ունեցած հսկայական հարգանքի ու համակրանքի շնորհիվ Ստեփան Գիշյանը պատիվ է ունեցել 2003-2006թթ. ղեկավարել Հայաստանի բանկերի միությունը, և հանուն արդարության պետք է ասել, որ սկսած հենց այդ տարիներից այդ կազմակերպությունը դարձավ է՛լ ավելի լուրջ գործոն ՀՀ բանկային օրենսդրության ձևավորման, բանկերի շահերի պաշտպանման գործում:

Հայ հասարակության շրջանում ունեցած իր անառարկելի հեղինակության, մարդկային բարձր արժանիքների շնորհիվ Ստեփան Գիշյանը 2009թ. առ այսօր հանդիսանում էր նաև ՀՀ Հանրային խորհրդի անդամ:

Եվ այսօր Ստեփան Գիշյանի մահը սգում ենք ոչ միայն մենք՝ նրա ընտանիքի անդամները, հարազատները, բարեկամները, ընկերներն ու գործընկերները, սգում են մեր երկրի տնտեսությամբ մտահոգ բոլոր շրջանակները, գործարար աշխարհի այն մեծ հատվածը, ովքեր հանգամանքների բերումով առիթ են ունեցել շփվել, առնչվել կամ համագործակցել Ստեփանի հետ: Մեր ընկերոջ մահը սգում են բանկի անդամ տասնյակ հազարավոր այն գյուղացիները, ովքեր երբևէ առիթ են ունեցել շփվելու այդ պայծառ ու լուսավոր անձնավորության հետ:

Սգում են բոլոր այն մտավորականները, գիտնականներն ու արվեստագետները, ում բազմաթիվ նախաձեռնումներին Ստեփան Գիշյանը հովանավոր ու աջակից եղավ: Սգում է մեր ժողովուրդը:

Սիրելի՛ բարեկամներ, ծանր է հրաժեշտի խոսք ասել մեկին, ում հետ առնչվել ես գրեթե ամեն օր, և բոլոր այդ օրերը լեցուն են եղել նրա բարությամբ ու լավատեսությամբ, նրա բազմաթիվ ծրագրերով ու նորանոր նախաձեռնություններով: Դեռ այնքան անելիք ու ասելիք ուներ Ստեփանը: Սակայն, ինչպես ասում են, աստված լավագույններին է իր մոտ տանում:

Ծանր է, դժվար է հավատալ, որ Ստեփան Գիշյանն այլևս մեզ հետ չէ, չկա: Բայց նա կա ու կապրի մեր սրտերում, իրեն ճանաչող բազմաթիվ մարդկանց հուշերում: Բարի ճանապարհ քեզ սիրելի Ստեփան, Աստված հոգիդ լուսավորի: Լուսավոր մարդ էիր, և թող երկնքում էլ լույսի բաժին լինես:

«ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ արմինիստրացիա

\* \* \*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպատել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ [uba@uba.am](mailto:uba@uba.am):